ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2022 թվականի N 198-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 28-ի N 482-Ա/2 հրամանի N 1 հավելվածի 72-րդ և 73-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության դպրոցներում 9-րդ դասարանի *«Հայոց լեզու»* և *«Մաթեմատիկա»* առարկաների կենտրոնացված ավարտական քննությունների գնահատականների վերաբերյալ բողոքարկման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) ***Կարեն Հունանյան*** - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

2) ***Հասմիկ Մակարյան*** - անդամ, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (բաժնի պետի պաշտոնակատար),

3) ***Շուշանիկ Կուրղինյան*** - անդամ, «Հրազդանի Ա. Մռավյանի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ *(համաձայնությամբ)*,

4) ***Արմինե Սիմոնյան*** - անդամ, «Աբովյանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ *(համաձայնությամբ)*,

5) ***Արևիկ Գևորգյան*** - անդամ, «Նոր Հաճնի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ *(համաձայնությամբ)*,

6) ***Անահիտ Սողոմոնյան*** - անդամ, ««Աբովյանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի ուսուցիչ *(համաձայնությամբ)*,

7) ***Լիլիթ Մկրտչյան*** - անդամ, Եղվարդի N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի ուսուցիչ *(համաձայնությամբ)*,

8) ***Տիգրան Խանսանամյան*** - անդամ, «Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի հունիսի 17
ք. Հրազդան